սակ տեսակ է. բայց արևմտաբնակացը զուտ ազգային կրնայ ըսուիլ։ Արանցը սևագոյն բամբակի լաթէ լայն վարտիք մը և լայն թևերով բաճկոնակ մը մինչև ծնկուքները, կօշիկ մը և մէկ նեղ գլխարկ մը՝ որուն եզերքը մթնագոյն մետաքսէ նեղ երիզ մը պատած է. գըլխարկին վրայ ալ ոսկեզիպակ գդակ մը. շատ անգամ ալ ոչխարի սեկէ շինած օձիքով մեկնոց մը կը ծածկէ զբաճկոնակն ալ, լայն վարտիքն ալ. իրենց թշնամեաց յարձակմանցը դէմ կենալու համար գրեթէ միշտ հրացանով ու կացինով զինեալ են։ Կանայք ալ մարդկանց պէս շապիկ մը ունին, բայց աւելի երկայն. աւելի նուրբ հիւսած, և գունաւոր մետաքսէ բանած է. վարտիքնին ներկած և քան զարանցը աւելի ամփոփ. գլխարկնին աչք առնող գունով մետաքսէ, ոսկեզօծ բանուած, և այնչափ պզտի որ հազիւ ճակատնին կը շօշափէ։ Մարդկանցմէ աւելի՝ քող մը միայն ունին՝ որով օտարներէն երեսնին ծածկեն։ Արևմտակողմինները գլխարկնուն վրայէն թաշկինակ մը կ'անցընեն և մազերնին երկու երկայն հիւսակ ըրած ետևներնէն վար կը ձգեն։

Աֆղանուհեաց գլխի գլխաւոր զարդերէն մէկն է վենետկոյ ֆէքքիio դրամը, զորոնք թելի վրայ անցուցած գըլուխներուն վրայ կը կապեն. սակայն ոսկիէ ու արծթէ շղթաներ ալ կապելը նուազ փառաւորութեան նշան չէ. այս շղթաներուն երկու կողմէն ալ ականջաց վրայ երկու խոշոր գնտակներ կ'իջնան. կ'ախորժին քթերնուն կռճիքէն ալ զանազան մեծութեամբ օղակներ կախել. զաղջիկները տարեց կանանցմէ որոշողը իրենց սպիտակ վարտիքը և արձակ մազերն են։

Քաղաքացի Աֆղանները քիչ և ամենաքիչ են. անոնք ալ կամ մեծամեծ անձինք են, կամ զինուորականք կամ մոլլայք, կամ քանի մը վաճառական և քանի մ'ալ գործաւորք. վասն զի վաճառականութիւնը, և մինչև արհեստները, Ցաճկաց պահուած են։

Լոնտոնի թիւրեղեայ պալատին հրկիզումը.

Հիանալի և չքնաղագեղ Բիւրեղեայ ըսուած պալատը, որ 1855ին Լոնտոնի աշխարհահանդիսին շէնքն էր և յետոյ փոխադրուեցաւ 'ի Սիտէնհէմ, Լոնտոնէն քանի մը մղոն հեռու բլրոյ մը վրայ աննկարագրելի տեսքով և գեղեցկութեամբ մը կը բարձրանայ։ Գաղղիայէն եկող ուղևորն դեռ չմտած Անգղիոյ տիեզերահռչակ մայրաքաղաքին մշտակախ ամպերուն մէջ և չթաթխուած ամոր թանձր ծխովը, կառաց պատուհանէն գլուխը դուրս հանելով կ'ապշի ու կը զմայլի այն հրաշալի շինուածին վրայ որ անհամար հետաքնին և գիտութեան վերաբերեալ նիւթեր կը պարունակէ իր մէջը, և ուր Լոնտոնի քաղաքացին իր պարապոյ ժամերը կ'երթայ զբօսնելով և հրահանգուելով կ'անցունէ. այս ժողովրդեան պալատը, ինչպէս որ կ'անուանեն, քիչ մնաց որ հրդեհէն բոլորովին լափուէր։

Երբ ամեն կողմ պատրաստուած էր անթիւ հանդիսատեսներ ընդունելու, երբ անզուգական հրաշալիքն 'ի կարգի կը սպասէին իրենց այցելուաց, երբ ծննդեան ըսուած ծառը՝ զարդարեալ ամենայն տեսակ երփներանգ երիզներով՝ կը ճօճէր դեռ ևս բոլոր իր ակաղձուն և ծանրացեալ անգին նիւթերով ճիւղերը, երբ միով բանիւ ամենայն ինչ անպատմելի հասարակաց ցնծութիւն մը կ'աւետէր, և յաջող ու բարի շահավաճառութիւն մը ընկերութեանը, ահա անկարծելի հրդեհը կ'աւրէ ու կը փճացունէ մէկ շնչով ամենուն յոյսն և ակնկալութիւնը։

Մենք որ Կոստանդնուպօլսոյ և ուրիշ փայտաշէն քաղաքաց կրակներուն սովորեալ ենք, կը զարմանանք 'ի սկզբան թէ որ կողմէն և ինչպէս արդեօք կրակը այս երկաթէ և ապակեայ շէնքին մէջ կը սկսի ներս մտնել. բայց տես որ դժբաղդաբար ոչ մէկ ժամ միայն՝ այլ

և մէկ օրէն աւելի մնունդ գտաւ հրդեհն իր անյագ որկորամէտութիւնը լեցընելու, ապականելով պալատին մեծագոյն մասը, և երկու հարիւր հազար լիրա ոսկըլինի (5,000,000 ֆր.) կորուստեան պատճառ ըլլալով ընկերութեան։

Շատ անգամ արևուն ճառագայթները այնպիսի կերպով մը կը ցոլան ու կը փայլփըլին այն ապակեայ շէնքին վրայ՝ որ հեռուէն տեսնողը զայն իրաւցընէ հրդեհ կը համարի, և ահա այս պատճառաւս առջի բերան Պլէքհիթէն այս երևոյթս տեսնելով՝ նորէն արևու խաղ մը կարծուելով՝ ոչ ոք ուշ դրաւ. բայց սխալմունքը շատ երկար չտևեց տեսնելով բոցախառն մուխ մը որ հիւսիսային բարձր աշտարակին կողմէն երկինք կը բարձրանար։ Երբոր այն կողմը վազեցին այցելուք, դիմացնին զարհուրելի տեսարան մը բացուեցաւ։ Հիւսիսային կողմի արտաքին տեսքը վերէն վար կատաղի բոցերով ծեփուած էր. կրակը աճելով կ'աճէր և կը սպառնար բովանդակ շէնքը ծայրէ ծայր բռնելու։ Այնպիսի նորատեսիլ երևոյթ մ'երբէք աշխարհքիս երեսը չէր տեսնուած. գալարուն ու երկայն բարակ բոցեր երբեմն ուղղատարածայ դէպ 'ի երկինք կը բարձրանային անհեդեդ օձերու նման լիզելով աշտարակին երեսը, երբեմն ալ լպրծելով ետևէ ետև գետին կ'իջնային կը սողային ու գեռալով աստիս անդին կը ճապաղէին, մինչդեռ երկու ահագին և վիթխարի սփինքսներն և կամ Աբու Սիմպէլի արձաններն առանց այրելու՝ յորդեռանդն բոցերուն մէջ վեհանձնման և լուսազուարթ անփոյթ կանգներ էին։

Ամենքը մէկ սիրտ մէկ հոգի սկսան ձեռուընիներնէն եկած օգնութիւնն ընել կրակին առաջն առնելու համար։ Ճամբուն հեռաւորութեանը և միանգամայն զառ 'ի վեր ըլլալուն պատճառաւ՝ ջրհանները շատ ուշ հոն կրցան հասնիլ։ Վերջապէս Շամ՝ անոնց գլխաւորը՝ հոն իրեն խմբովը վրայ հասաւ, մինչդեռ շէնքին բոլոր հիւսիսային կողմը բոցով ծածկուած էր. եթէ ջրհանները քիչ մ'ալ ուշանային, և հիւսիսային կողմը փչելը շարունակէր՝ Սիտէնհէմի Բիւրեղեայ պալատը մէյմ'ալ տեսնելու բաղդը չէինք ունենար։

Կորուստը մեծ էր. շէնքին բոլոր այն մասը ուր հաւաքուածի բուսոց պարտէզ մը ձևացած էր, օդուն ջերմախառնութեան աստիճանը արուեստով բարձրացուցած, քանի մը վայրկենի մէջ աւերակաց և մոխրոյ կոյտ մը դարձաւ իրեն շքեղ դաւիթներովը և մերձակայ սենեակներով։ Եգիպտական և ասորեստանեայ յիշատակարանները, բիւզանդեան սրահն իրեն հանդիպակաց դաւթովը, Կրանադայի Մաւրիտանացւոց ապարանից նմանողութիւնը իրեն առիւծուց բակովը, և Ապէնսէրաճիներու ընդարձակ սրահովը, սքանչելի գըրատունն, և ուրիշ առանց նման թանկագին և փառաւոր յիշատակներ բոցերուն կեր եղան։

Ցաւելու արժանի է նաև այն կենդանեաց և թռչնոց ճոխ հաւաքման կորուստը որ շէնքին այն կողմը կը կենդանացընէին, որոնք գրեթէ բոլորովին այրեցան։ Գոյնզգոյն թութակներ, կապիկներ, ձիագետի մը, տեսակ տեսակ ձկներ, խումբ մ'ալ այլ և այլ թռչնոց, սպիտակ տատրակներ՝ զոր Լոլա Մոնդէս՝ ընկերութեան ընծայեր էր, գրեթէ ամենն ալ կրակէն ջնջուեցան։ Շիմբանզէ կոչուած կապիկն ալ յետ քիչ մ'առեն վանդակին երկաթները ճանկելէն ու ճանկռտելէն, և ողորմելի կանչիւններ արձըկելէն՝ յանկարծ բոցոյ մրրկէ մը կը յափշտակուի ու կը լափուի։

Եթէ մէկ կողմանէ գովասանաց և շնորհակալութեան արժանի են այն քաջասիրտները որոնք հոգւով և մարմնով դէմ դրին կրակին բուռն յարձակմանը, և ազատեցին շէնքը մեծագոյն վնասէ մը, միւս կողմանէ ալ շատ պախարակելի են անոնք որ կրակն իրենց թիկունք առնելով՝ սկսան բոցերուն լուսովը գողութիւններ ընել, այնչափ որ հարկ եղաւ բովանդակ գունդ մը զօրաց կանչել հոն այն չարագործաց խումբը վռնտելու անկէց։ Շատերը որ

զգեստին հաներ էին կրակը մարելու աշխատելով՝ ալ չէին գտած, որովհետև գողերը տարեր էին։

Այս սահաւոր հրդեհը ապականութենէ զատ մեծամեծ վնասուց ալ պատճառ եղաւ. սակայն այսու հանդերձ չարիքը աւելի մեծ ալ կրնար ըլլալ. այս մխիթարութիւնը միայն կրնանք ունենալ տեսնելով տակաւին Բիւրեղեայ կիսաւեր պալատը Սիտէնհէմ բլրոյն վրայ։

Աղբիւր.

Իրեք ճամբորդներ առաւօտ մը կը պատահին աղբիւրի մը՝ օթեվանի մը մօտ։ Մէկը վաճառական էր, մէկալը ծանրագլուխ ծեր մը, երրորդը դեռահասակ տղայ մը՝ որ կը վազէր մոլորած ոչխարի մը ետևէն։ Աղբիւրին աւազանին վրայ գրուած էր հին դիրերով այս արձանագրութիւնս. Ինծի նմանէ։ Իրեք ճամբորդները չանցին այս բանիս նշանակութիւնը իմանալ։ Նախ վաճառականը սկսաւ ըսել. Այս աղբիւրը որ կը պարտի ընդարձակ գաւառներու մէջ, կը խառնուի գետակներու, վտակներու, և վերջը վերջը մեծ գետ մը կը դառնայ, մեղի ըսել կ'ուզէ որ միշտ պէտք է աշխատիլ որով կարենանք հարստանալ։—Ծերը այսպէս մեկնեց. Ես ուրիշ միտք մը կը տեսնեմ այս արձանագրութեանս մէջ. աղբիւրը ձրի կը յագեցընէ զանոնք որ կը մօտենան իր աւազանին, և իր օրինակաւը կ'ըսէ թէ պէտք է մարդուս որ օգտակար ըլլայ իր մերձաւորին։—Իսկ տղան լռութիւն մտիկ կ'ընէր. երբոր հարցուցին իրեն կարծիքը՝ մէկէն պատասխանեց. Աղբիւրի մը ջուրը այն ատեն յարգ ունի՝ երբոր յատակ և մաքուր է. թէ որ աղմոտի՝ զզուելի կ'ըլլայ, և ինչուան անասուններն իսկ կը քաշուին հոն խոթելու իրենց շրթունքը. յարգ ունենալու համար՝ պէտք է մաքուր ըլլալ։

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեռեալ կանանց լիճը. — Ամերիկայի Գարիպու գաւառին մէջ, ուր սկզբան պեղմունքներ ըլլալ հանքերու առատութեան համար և շատ տարիներէ 'ի վեր մեծ յառաջադիմութեան մէջ են, գտնուեցաւ անապատ տեղերու մէջ լիճ մը որուն անուանակոչութեան պատմութիւնը, որ կ'երևնայ թէ տխուր բան մը պիտի ըլլայ՝ դեռ յայտնի չէ, վասն զի հնդիկները կ'անուանեն այս ծովակս՝ լիճ մեռեալ կանանց։

Այս լճին երկայնութիւնը երեք կամ չորս հազար մղոն է, իսկ լայնութիւնը մէկ մղոն ու կէս. ջուրերը խիստ մաքուր և թափանցիկ են, անանկ որ ինչուան յատակը կը տեսնուի, որ հաստատուն է և բարակ աւազով մը ծածկուած։ Եզերքները լի են զանազան տեսակ ծառերով, որոնց մեծ մասը սոճ և կաղամախ են։ Լճին մէջ որսուած կարմրախայտ ձկները շատ համով և մեծ են. լճափունքը բնակող հնդիկները այնչափ կ'որսան ատոնցմէ, որ բուռ մը ալիւրի տեղ կշտանալու չափ կու տան ուրիշի. շրջակայ երկիրը լճին պէս դեղեցիկ է։ Հովիտը որ կոհակ կոհակ բարձրացած է՝ զարդարեալ է փափուկ խոտով և բլուրները ծածկուած են փառաւոր ծառերով։ Այս բարձրաւանդակներէն երևցած նկարավայել և ընդարձակ տեսքը՝ տեղւոյս զարմանալի գեղեցկութիւնը կը ցուցընէ. բայց թէ ինչպէս ասանկ աղուոր լիճը տխուր անուն մ'առած ըլլայ, չենք կրնար ըսել։ Այս ջրերուն մօտ կայ ուրիշ լիճ մ'ալ որուն չորս կողմը, ինչպէս այս նահանգիս մէջ ամեն տեղ, արօտները պարարտ և շատ են։ Անտառներու և դաշտերու մէջ, լճերու եզերքները անբաւ բազմութիւն կայ վայրի հաւերու որոնք դիւրաժողովելի ալ են։ Կրնար նաև բաղեր, սագեր և ուրիշ ջրասուն թռչուններ որսացուիլ, եթէ չորս կողմի ճահիճներուն պատճառաւ լճին մօտենալը անկարելի, չըլլար։ Այս լճին և դեռ ու-